ՀՀ առեվտրային բանկերի կողմից ներգրավված փոխառու միջոցների վերլուծությունը և դրանց օպտիմալացման ուղիները

Օսիպյան Լիանա Հ.
Դասախոս, Ֆինանսական հաշվառման ամբիոն, Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)
https://orcid.org/0009-0009-5678-0580
lianaosipyan94@gmail.com
Կարապետյան Վեներա Ա.
Ասիստենտ, Ֆինանսական հաշվառման ամբիոն, Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)
https://orcid.org/0009-0007-9367-060X
venera.karapetyan@inbox.ru

ՀՏԴ՝ 336.71:336.77 (479.25); **EDN:** XKSLSO; **JEL:** G21
DOI: 10.58587/18292437-2026.5-307
Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ առևտրային բանկեր, փոխառու միջոցներ, ավանդներ, իրացվելիություն, HHI ինդեքս, ROA, ROE, LTD, ֆինանսավորման արժեք, դոլարիզացիա

Анализ привлеченных средств коммерческих банков Республики Армения и пути их оптимизации

Осипян Лиана А.
Преподаватель кафедры финансового учета факультета бухгалтерского учета и аудита, Армянский государственный экономический университет (Ереван, РА)
Карапетян Венера А.
Ассистент кафедры финансового учета факультета бухгалтерского учета и аудита, Армянский государственный экономический университет (Ереван, РА)

Аннотация. В статье проведен комплексный анализ состава, структуры, динамики и эффективности привлеченных средств коммерческих банков Армении. Исследованы уровень концентрации доходности в банковской системе Армении, диверсификация источников финансирования, а также влияние привлеченных средств на ликвидность банков, показатели рентабельности (ROA, ROE) и стоимость финансирования. Для оценки конкурентоспособности рынка привлеченных средств был применен индекс Херфиндаля-Хиршмана (HHI). На основе результатов анализа предложены стратегические решения, направленные на повышение эффективности управления привлеченными средствами и минимизацию валютных рисков и рисков ликвидности.
Ключевые слова: коммерческие банки, привлеченные средства, депозиты, ликвидность, индекс HHI, ROA, ROE, LTD, стоимость финансирования, долларизация

Analysis of Borrowed Funds Raised by Commercial Banks of the Republic of Armenia and Ways of Their Optimization

Osipyan Liana H.
Lecturer, Department of Financial Accounting, Faculty of Accounting and Audit, Armenian State University of Economics (Yerevan, RA)
Karapetyan Venera A.
Assistant, Department of Financial Accounting, Faculty of Accounting and Audit, Armenian State University of Economics (Yerevan, RA)

Abstract. The article carries out a comprehensive analysis of the composition, structure, dynamics, and efficiency of borrowed funds raised by commercial banks in Armenia. The concentration level of profitability in the Armenian banking system, diversification of funding sources, as well as the impact of raised funds on bank liquidity, profitability ratios (ROA, ROE), and cost of funding are examined. The Herfindahl-Hirschman Index (HHI) was applied to evaluate the competitiveness of the market for attracted funds. Based on the results of the analysis, strategic solutions aimed at improving the efficiency of managing borrowed funds and mitigating currency and liquidity risks are proposed.
Keywords & phrases: commercial banks, borrowed funds, deposits, liquidity, HHI index, ROA, ROE, LTD, cost of funding, dollarization

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը

Առևտրային բանկերը հանդիսանում են ՀՀ ֆինանսական համակարգի առանցքային ինստիտուտները՝ ապահովելով տնտեսության մեջ առկա ազատ դրամական միջոցների վերաբաշխումը: Բանկերի ակտիվների շուրջ 80%-ը ձևավորվում է ներգրավված փոխառու միջոցների հաշվին: Ուստի դրանց կառուցվածքի, ժամկետայնության, արժութային բաշխվածության և արդյունավետության գնահատումը խիստ արդիական է ինչպես առանձին բանկերի ֆինանսական կայունության, այնպես էլ ամբողջ տնտեսության լիկվիդայնության ու դրամավարկային քաղաքականության տեսանկյունից:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է վերլուծել ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված փոխառու միջոցների կազմը, դինամիկան և արդյունավետությունը, գնահատել դրանց ազդեցությունը բանկերի շահութաբերության ու ռիսկերի վրա և մշակել ֆինանսական ռեսուրսների օպտիմալացման առաջարկներ: Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել ներգրավված միջոցների տեսական-մեթոդաբանական հիմքերը:
2. Գնահատել ՀՀ բանկային համակարգի կենտրոնացվածությունը և մրցակցային միջավայրը:
3. Վերլուծել խոշոր բանկերի պարտավորությունների կառուցվածքը, ժամկետայնությունը և արժութային կազմը:
4. Հաշվարկել և համեմատել բանկերի ֆինանսատնտեսական գործակիցները (ROA, ROE, LTD, Ֆինանսավորման արժեք):

Հետազոտության մեթոդաբանությունը

Աշխատանքում կիրառվել են հորիզոնական, ուղղահայաց, համեմատական, գործակցային վերլուծությունների, ինչպես նաև Հերֆինդալ-Հիրշմանի (HHI) ինդեքսի հաշվարկման մեթոդները: Տեղեկատվական բազա են ծառայել ՀՀ Կենտրոնական բանկի հրապարակումները, ՀՀ օրենսդրական ակտերը (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 32) և ՀՀ առևտրային բանկերի 2024-2025 թթ. ֆինանսական հաշվետվությունները:

Գրականության ակնարկ

Բանկերի կողմից ներգրավված փոխառու միջոցները կարգավորվում են միջազգային ստանդարտներով (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 32) և ՀՀ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով, որտեղ ավանդների ընդունումը դիտարկվում է որպես հիմնական պասիվային գործառնություն: Փոխառու կապիտալը հնարավորություն է տալիս ընդլայնելու բանկային գործունեությունը, սակայն մեծ ծավալները բարձրացնում են ֆինանսական ռիսկերը: Ավանդների և մեծածախ ֆինանսավորման կառուցվածքային տեղաշարժերն ուղղակիորեն ազդում են բանկի իրացվելիության, տոկոսադրույքային ռիսկի և ակտիվների վերափոխման (maturity transformation) գործընթացի վրա: ֆինանսավորման աղբյուրների չափավոր բազմազանությունը (դիվերսիֆիկացիան) բարձրացնում է բանկի դիմադրողականությունը շոկերի նկատմամբ, մինչդեռ չափազանց մեծ բազմազանությունը կարող է նվազեցնել շահութաբերությունը կառավարման ծախսերի աճի պատճառով:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Շուկայի կենտրոնացվածությունը և պարտավորությունների դինամիկան

2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ-ում գործող 17 առևտրային բանկերի ընդհանուր ակտիվները կազմել են 11,971,184,138 հազ. դրամ, իսկ ընդհանուր պարտավորությունները՝ 9,942,865,108 հազ. դրամ (ակտիվների 83%-ը): Համակարգի զուտ շահույթը 2025 թ. 9 ամիսներին հասել է 307,871,973 հազ. դրամի՝ արձանագրելով 18.77% աճ 2024 թ. նույն ժամանակահատվածի համեմատ:

Աղյուսակ 1. *ՀՀ խոշոր առևտրային բանկերի զուտ շահույթի և պարտավորությունների ցուցանիշները (2024-2025 թթ.) (հազար դրամ)*

Բանկի անվանումը	Զուտ շահույթ	Մասնաբաժինը շահույթում	Պարտավորություններ	Մասնաբաժինը պարտավորություններում	Պարտավորությունների աճ (%)
Արդշինբանկ	103,216,964	33.53%	2,066,021,422	20.78%	+4.51%
Ամերիաբանկ	51,046,422	16.58%	1,807,471,101	18.18%	+11.15%
ԱԿԲԱ Բանկ	26,567,498	8.63%	801,853,364	8.06%	+4.37%

Բանկի անվանումը	Զուտ շահույթ	Մասնաբաժինը շահույթում	Պարտավորություններ	Մասնաբաժինը պարտավորություններում	Պարտավորությունների աճ (%)
Ինեկոբանկ	21,608,205	7.02%	705,993,409	7.10%	+5.06%
Էվոկաբանկ	18,072,679	5.87%	572,631,212	5.76%	+22.35%
ԱյԴի Բանկ	13,810,209	4.49%	405,138,671	4.07%	+16.42%
Այլ բանկեր (11 բանկ)	73,550,000	23.88%	3,583,755,929	36.05%	-
ԸՆԴԱՄԵՆԸ	**307,871,973**	**100.0%**	**9,942,865,108**	**100.0%**	**+7.72%**

Աղբյուրը՝ հաշվարկված է հեղինակի կողմից բանկերի հաշվետվությունների հիման վրա:

Ինչպես ցույց է տալիս աղյուսակ 1-ը, շուկան ունի բարձր կենտրոնացվածություն ըստ շահույթի. 6 խոշոր բանկերն ապահովում են համակարգի զուտ շահույթի 76.12%-ը: Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսի (HHI) հաշվարկը ըստ պարտավորությունների 2025 թ. կազմել է 1088.39 (2024 թ.՝ 1099.23), ինչը վկայում է, որ ներգրավված միջոցների շուկան ցածր կենտրոնացվածությամբ և մրցակցային է: Սակայն շահույթի գծով HHI-ն կազմել է 1640, ինչը մոտեցնում է շուկան չափավոր մոնոպոլացվածության (հատկապես Արդշինբանկի գերակայության հաշվին):

Պարտավորությունների կառուցվածքային վերլուծությունը

Խոշոր բանկերի ներգրավված միջոցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց հիմնական աղբյուրը հաճախորդների ընթացիկ հաշիվներն ու ավանդներն են:

Աղյուսակ 2. *Խոշոր բանկերի պարտավորությունների կառուցվածքը (30.09.2025 թ.)*

Բանկ	Հաճախորդների հաշիվներ և ավանդներ	Պարտավորություններ բանկերին	Հետգնման (ՌԵՊՈ) պայմանագրեր	Թողարկված պարտքային արժեթղթեր	Այլ պարտավորություններ
Արդշինբանկ	76%	7.70%	14.51%	0.11%	1.68%
Ամերիաբանկ	70%	4.99%	4.31%	9.58%	11.12%
ԱԿԲԱ Բանկ	72%	0.74%	0.63%	6.14%	20.49%
Ինեկոբանկ	72%	2.54%	7.18%	4.70%	13.58%
Էվոկաբանկ	68%	3.53%	6.89%	5.36%	16.22%
ԱյԴի Բանկ	63%	20.69%	8.60%	5.50%	2.21%
ՄԻՋԻՆ	74%	5.89%	7.02%	5.21%	7.88%

Աղբյուրը՝ հաշվարկված է հեղինակի կողմից:

Պարտավորությունների կառուցվածքում հաճախորդների ավանդների և ընթացիկ հաշիվների գերիշխող դիրքը (միջինը 74%) վկայում է ավանդական ավանդա-վարկային մոդելի պահպանման մասին: Թողարկված պարտատոմսերի փոքր տեսակարար կշիռը (միջինը 5.21%) ցույց է տալիս, որ բանկերը դեռևս սահմանափակ են օգտագործում կապիտալի շուկայի գործիքները:

Ավանդային պորտֆելի վերլուծություն

2025 թ. 9 ամիսներին ցպահանջ (ընթացիկ) հաշիվների մասնաբաժինն ընդհանուր ավանդներում նվազել է 61%-ից հասնելով 53%-ի, իսկ ժամկետային ավանդներն աճել են: Սա դրական միտում է իրացվելիության տեսանկյունից, քանի որ մեծացնում է ռեսուրսների կայունությունը, սակայն միևնույն ժամանակ բարձրացրել է բանկերի ֆինանսավորման ծախսերը:

Գործակցային վերլուծություն և ռիսկերի գնահատում

Ներգրավված միջոցների արդյունավետությունը գնահատելու համար հաշվարկվել են ROA, ROE, Ֆինանսավորման արժեքի և LTD (Վարկեր/Ավանդներ) ցուցանիշները:

Աղյուսակ 3. *ՀՀ խոշոր բանկերի ֆինանսական գործակիցները (2024-2025 թթ.)*

Բանկ	ROA (տարեկանացված)	ROE (տարեկանացված)	Ֆինանսավորման արժեքը (%)	LTD (Վարկեր/Ավանդներ)
	**30.09.2025	31.12.2024**	**30.09.2025	31.12.2024**
Արդշինբանկ	5.8% | 6.7%	38.8% | 51.8%	2.8% | 2.6%	91.1% | 76.6%
Ամերիաբանկ	3.4% | 3.6%	24.1% | 26.6%	4.1% | 3.0%	123.5% | 116.7%
ԱԿԲԱ Բանկ	3.7% | 3.4%	20.4% | 19.4%	5.2% | 4.9%	104.8% | 91.8%
Ինեկոբանկ	3.6% | 4.3%	26.3% | 29.8%	4.6% | 3.5%	99.3% | 82.8%
Էվոկաբանկ	3.9% | 2.9%	26.1% | 19.0%	4.9% | 3.8%	84.1% | 84.0%
Այդի Բանկ	4.1% | 4.0%	23.6% | 22.9%	3.8% | 2.5%	96.9% | 90.1%
ՄԻՋԻՆ	**4.1% | 4.2%**	**26.6% | 28.2%**	**4.2% | 3.4%**	**99.9% | 90.3%**

Աղբյուրը՝ հաշվարկված է հեղինակի կողմից:

Գործակցային վերլուծության հիմնական եզրահանգումները.

1. Ֆինանսավորման արժեքի աճ: Ֆինանսավորման միջին արժեքն աճել է 0.8 տոկոսային կետով (3.4%-ից հասնելով 4.2%-ի): Սա պայմանավորված է ժամկետային ավանդների տեսակարար կշռի ավելացմամբ և ավանդային շուկայում մրցակցության սրմամբ:

2. Շահութաբերության չափավոր նվազում: Ֆինանսավորման ծախսերի աճին համընթաց՝ միջին ROA-ն 4.2%-ից նվազել է 4.1%-ի, իսկ ROE-ն՝ 28.2%-ից 26.6%-ի:

3. Իրացվելիության ռիսկի աճ (LTD ցուցանիշ): Վարկեր/Ավանդներ (LTD) միջին հարաբերակցությունը 90.3%-ից հասել է 99.9%-ի: Ամերիաբանկի դեպքում այն կազմում է 123.5%, իսկ ԱԿԲԱ Բանկում՝ 104.8%: 100%-ը գերազանցող LTD-ն ցույց է տալիս, որ բանկերն ավանդներից զատ օգտագործում են այլ կարճաժամկետ փոխառություններ, ինչը մեծացնում է կախվածությունը մեծածախ ֆինանսավորումից և առաջացնում իրացվելիության ռիսկ:

4. Արժութային կառուցվածքը և դոլարիզացիան

2024-2025 թթ. ընթացքում նկատվում է պարտավորությունների դոլարիզացիայի աստիճանական նվազում:

- ՀՀ դրամով պարտավորություններ: 49%-ից աճել են 52%:
- ԱՄՆ դոլարով պարտավորություններ: 34%-ից նվազել են 33%:
- Եվրոյով պարտավորություններ: 13%-ից նվազել են 12%:
- Այլ արժույթներ: 2%:

Արտարժութային ավանդների կրճատումը և դրամային ավանդների աճը պայմանավորված են ԿԲ դրամավարկային քաղաքականությամբ, դրամային բարձր տոկոսադրույքներով և ազգային արժույթի նկատմամբ վստահության աճով, ինչը նվազեցնում է բանկերի արժութային ռիսկը:

Եզրակացություններ

1. ՀՀ բանկային համակարգն ապահովում է բարձր շահութաբերություն և կայուն աճ, սակայն շահույթի 76%-ը կենտրոնացած է 6 խոշոր բանկերում:

2. Փոխառու միջոցների շուկան HHI ինդեքսով (1088.39) մրցակցային է, իսկ պարտավորու-

թյունների 74%-ը ձևավորվում է հաճախորդների ավանդներից:

3. Նկատվում է LTD ցուցանիշի աճ (մինչև 99.9%) և ֆինանսավորման արժեքի ավելացում (մինչև 4.2%), ինչը վկայում է իրացվելիության ռիսկերի խստացման մասին:

4. Դոլարիզացիայի մակարդակը նվազել է՝ հասնելով 33%-ի, ինչը նպաստում է արժութային ռիսկերի մեղմմանը:

Առաջարկություններ

1. Ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացում: Խրախուսել բանկային պարտատոմսերի թողարկումը և միջբանկային վարկավորման ակտիվացումը: Առաջարկվում է ԿԲ-ի կողմից ստեղծել միասնական թվային միջբանկային հարթակ՝ կարճաժամկետ իրացվելիության արդյունավետ վերաբաշխման համար:

2. Երկարաժամկետ ավանդային պորտֆելի խթանում: Մշակել հատուկ խնայողական/կուտակային ավանդային ծրագրեր (օրինակ՝ երիտասարդ մասնագետների կամ կորպորատիվ հաճախորդների համար բոնուսային տոկոսադրույքներով)՝ ցպահանջ հաշիվները երկարաժամկետ ռեսուրսների վերածելու նպատակով:

3. Տեխնոլոգիական և AI լուծումների ներդրում: Ներդնել ակտիվների և պարտավորությունների կառավարման (ALM) ավտոմատացված համակարգեր, որոնք արհեստական բանականության միջոցով կկանխատեսեն ավանդների արտահոսքը և կառաջարկեն դինամիկ տոկոսադրույքներ:

4. Համակարգային ռիսկայնության գնահատման մոդել: ԿԲ-ի կողմից կիրառել բանկերի համակարգային ռիսկի ինտեգրված մոդել, որը հաշվի առնելով LTD-ն, HHI-ն և արտարժութային դիրքը՝ բարձր ռիսկային բանկերի նկատմամբ կսահմանի լրացուցիչ իրացվելիության բուֆերներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ օրենքը «Բանկերի և բանկային գործունեության մասին», ՀՕ-68, 1996:
2. ՀՀ ԿԲ խորհրդի որոշում «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2, 2007:
3. **Հակոբյան Ա., Գասպարյան Ա.,** Հաշվապահական հաշվառումը առևտրային բանկերում, - Երևան, 2022:
4. **Մաթևոսյան Ա. և այլք,** Կորպորատիվ ֆինանսների ներածություն, Երևան, 2024:
5. **Muller C., Ossandon Busch M., Sarmiento M., Pinzon-Puerto F.,** "Fragile wholesale deposits, liquidity risk, and banks' maturity transformation", BIS Working Papers, 2025.
6. **Mishkin F. S., Eakins S. G.,** Financial Markets and Institutions (10th Edition), Pearson, 2024:
7. Erhemjamts O., Saunders A., Cornett M. M., Financial Markets and Institutions (8th Edition), McGraw-Hill, 2022:
8. **Duong K. D. et al.,** "Do Bank Funding Diversity and Bank Lending Affect Net Interest Margins?", SAGE Open, 2023:
9. ՀՀ առևտրային բանկերի 2024-2025 թթ. 3-րդ եռամսյակի ֆինանսական հաշվետվություններ:

Сдана/Հանձնվել է՝ 02.10.2026
Рецензирована/Գրախոսվել է՝ 10.10.2026
Принята/Ընդունվել է՝ 16.10.2026